ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-20/9

ք. Երևան «23» հոկտեմբեր 2020թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Տ.Գալստյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բոֆֆո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մանուկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Ազգային ժողովի շենքի արտաքին լուսավորության աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **45 աշխատանքային օր**: Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ)Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ)Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը

ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 34 800 000 (երեսունչորս միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 5 800 000 (հինգ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը: Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ ԱԺ աշխատակազմ **ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19** **ՀՎՀՀ 00008519** **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** **Հ/Հ 900011020089** **ՀՀ ԱԺ աշխատակազմի** **ղեկավար–գլխավոր քարտուղար** **Տ. Գալստյան**	**«Բոֆֆո» ՍՊԸ** **ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/2** **ՀՎՀՀ: 00121699** **Հ/Հ: 1570015445090100** **Բանկ: Ամերիաբանկ** **Հեռ.: +374 10523532** **Տնօրեն Ա.Մանուկյան**
---------- **/ստորագրություն/** **Կ.Տ**	**----------** **/ստորագրություն/** **Կ.Տ**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«23» հոկտեմբեր 2020թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՇԵՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ դրամ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	1 Լուսավորության աշխատանքներ				
1	Հատակի մեջ ներկառուցվող LED լուսարձակ: Մուտքի լարումը AC100-240V, հզորությունը 60W, LED-երի քանակը՝ 12, ցանցի հաճախությունը 50/60Hz, աշխատանքային պաշարը ոչ պակաս քան 50000 ժամ, տրամագիծը 330մմ, բարձրությունը՝ ոչ ավել, քան 260 մմ, արտաքին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP67, լույսային ճառագայթի անկյունը 12՛, լուսային հոսքը 6600 lm, լուսային ջերմաստիճանը 3000Կ, մինչև 15՛ կարգավորվող անկյունով, հակակուրացնող պաշտպանիչ էկրանով:	հատ	10	285500	2855000
2	Գծային LED լուսարձակ: Մուտքի լարումը AC100-240 , հզորությունը 108W, LED-երի քանակը՝ 54, ցանցի հաճախությունը 50/60Hz, աշխատանքային պաշարը ոչ պակաս քան 50000 ժամ, երկարությունը՝ 1000 մմ, լայնությունը 70 մմ, բարձրությունը 75 մմ: Արտաքին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP66, լույսային ճառագայթի անկյունը12.5՛, լուսային հոսքը 7020 lm, լուսային ջերմաստիճանը 3000Կ:	հատ	40	169500	6780000
3	Գծային LED լուսարձակ: Մուտքի լարումը AC100-240V, հզորությունը 54W, LED-երի քանակը՝ 27, ցանցի հաճախությունը 50/60Hz, աշխատանքային պաշարը ոչ պակաս քան 50000 ժամ, երկարությունը՝ 500 մմ, լայնությունը 70 մմ, բարձրությունը 75 մմ: Արտաքին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP66, լույսային ճառագայթի անկյունը12.5՛, լուսային հոսքը 2510 lm, լուսային ջերմաստիճանը 3000Կ:	հատ	8	105500	844000
4	Արտաքին տեղադրման LED լուսարձակ, համալրված երկկողմանի միացման մալուխներով եւ վարդակներով: Մուտքի լարումը AC100-240V, հզորությունը 75W, LED-երի քանակը՝ 18, ցանցի հաճախությունը 50/60Hz, աշխատանքային պաշարը ոչ պակաս քան 50000 ժամ, տրամագիծ՝ 286 մմ, բարձրությունը 272 մմ: Հակակուրացնող շերտավարագույրով: Արտաքին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP66, լույսային ճառագայթի անկյունը 20՛, լուսային հոսքը 8250 lm, լուսային ջերմաստիճանը 3000Կ:	հատ	4	231300	925200
5	Հատակի մեջ ներկառուցվող LED լուսարձակ: Մուտքի լարումը AC100-240V, հզորությունը 40W, LED-երի քանակը՝ 24, ցանցի հաճախությունը 50/60Hz, աշխատանքային պաշարը ոչ պակաս քան 50000 ժամ, տրամագիծը 260մմ, բարձրությունը՝ ոչ ավել, քան 195 մմ, արտաքին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP67, լույսային ճառագայթի անկյունը15X60՛՛, լուսային հոսքը 2600 lm, լուսային ջերմաստիճանը 3000Կ:	հատ	22	149000	3278000
6	Գծային LED լուսարձակ, համալրված երկկողմանի միացման մալուխներով եւ վարդակներով: Մուտքի լարումը DC24V, հզորությունը 18W, աշխատանքային պաշարը ոչ պակաս քան 50000 ժամ, երկարությունը՝ 1000 մմ, լայնությունը 28 մմ, բարձրությունը ոչ ավել քան 79 մմ: Արտաքին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP66, լուսային ճառագայթի անկյունը 45x60՛՛, լուսային հոսքը 1170 lm, լուսային ջերմաստիճանը 3000Կ:	հատ	198	34100	6751800

7	Գծային LED լուսարձակ, համալրված երկկողմանի միացման մալուխներով եւ վարդակներով: Մուտքի լարումը DC24V, հզորությունը 12W, աշխատանքային պաշարը ոչ պակաս քան 50000 ժամ, երկարությունը՝ 500 մմ, լայնությունը 28 մմ, բարձրությունը ոչ ավել քան 79 մմ: Արտաքին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP66, լույսային ճառագայթի անկյունը 45x60՛, լուսային հոսքը 780 lm, լուսային ջերմաստիճանը 3000Կ:	հատ	14	29500	413000
8	Գծային LED լուսարձակ, համալրված երկկողմանի միացման մալուխներով եւ վարդակներով: Մուտքի լարումը DC24V, հզորությունը 24W, աշխատանքային պաշարը ոչ պակաս քան 50000 ժամ, երկարությունը՝ 1000 մմ, լայնությունը 37 մմ, բարձրությունը 65 մմ: Արտաքին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP66, լուսային ճառագայթի անկյունը 55՛, լուսային հոսքը 1560 lm, լուսային ջերմաստիճանը 3000Կ:	հատ	24	54500	1308000
9	Գծային LED լուսարձակ, համալրված երկկողմանի միացման մալուխներով եւ վարդակներով: Մուտքի լարումը DC24V, հզորությունը 28W, ցանցի հաճախությունը 50/60Hz, աշխատանքային պաշարը ոչ պակաս քան 50000 ժամ, երկարությունը՝ 1000 մմ, լայնությունը 58 մմ, բարձրությունը 102 մմ: Արտաքին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP66, լուսային ճառագայթի անկյունը 55՞, լուսային հոսքը 1820 lm, լուսային ջերմաստիճանը 3000Կ:	հատ	20	99300	1986000
10	Գծային LED լուսարձակ, համալրված երկկողմանի միացման մալուխներով եւ վարդակներով: Մուտքի լարումը DC24V, հզորությունը 18W, ցանցի հաճախությունը 50/60Hz, աշխատանքային պաշարը ոչ պակաս քան 50000 ժամ, երկարությունը՝ 1000 մմ, լայնությունը 42 մմ, բարձրությունը 77 մմ: Արտաքին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP66, լուսային ճառագայթի անկյունը 15x30՞, լուսային հոսքը 1170 lm, լուսային ջերմաստիճանը 3000Կ:	հատ	8	72600	580800
11	Գծային LED լուսատու, համալրված երկկողմանի միացման մալուխներով և վարդակներով: Մուտքի լարումը AC100-240V , հզորությունը 22W, ցանցի հաճախությունը 50/60Hz, աշխատանքային պաշարը ոչ պակաս քան 50000 ժամ, երկարությունը՝ 1000 մմ, լայնությունը 58 մմ, բարձրությունը 102 մմ: Արտաքին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP66, լուսային ճառագայթի անկյունը 55՞, լուսային հոսքը 1430 lm, լուսային ջերմաստիճանը 3000Կ:	հատ	3	75500	226500
12	Գծային LED լուսատու, համալրված երկկողմանի միացման մալուխներով և վարդակներով: Մուտքի լարումը DC24V , հզորությունը 24W, աշխատանքային պաշարը ոչ պակաս քան 50000 ժամ, երկարությունը ՝ 1000 մմ, լայնությունը 37 մմ, բարձրությունը 65 մմ: Արտաքին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP66, լուսային ճառագայթի անկյունը 10x60՛, լուսային հոսքը 1560 lm, լուսային ջերմաստիճանը 3000Կ:	հատ	8	54500	436000
13	LED լուսարձակ: Մուտքի լարումը AC100-240V, հզորությունը 20W, ցանցի հաճախությունը 50/60Hz, աշխատանքային պաշարը ոչ պակաս քան 50000 ժամ, տրամագիծ՝125 մմ, բարձրությունը 180 մմ: Արտաքին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP66, լուսային ճառագայթի անկյունը 30՛, լուսային հոսքը 1300 lm, լուսային ջերմաստիճանը 3000Կ:	հատ	4	108600	434400
14	LED լուսարձակ: Մուտքի լարումը AC100-240V, հզորությունը 20W, ցանցի հաճախությունը 50/60Hz, աշխատանքային պաշարը ոչ պակաս քան 50000 ժամ, տրամագիծ՝125 մմ, բարձրությունը 180 մմ: Արտաքին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP66, լուսային ճառագայթի անկյունը 90՛, լուսային հոսքը 1300 lm, լուսային ջերմաստիճանը 3000Կ:	հատ	2	108600	217200
15	Գծային LED լուսաարձակ, համալրված երկկողմանի միացման մալուխներով և վարդակներով: Մուտքի լարումը DC24V , հզորությունը 18W, աշխատանքային պաշարը ոչ պակաս քան 50000 ժամ, երկարությունը ՝ 1000 մմ, լայնությունը 37 մմ, բարձրությունը 65 մմ: Արտաքին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP66, լուսային ճառագայթի անկյունը 25x45՛, լուսային հոսքը 1170 lm, լուսային ջերմաստիճանը 3000Կ:	հատ	16	50200	803200
16	Գծային LED լուսարձակ, համալրված երկկողմանի միացման մալուխներով եւ վարդակներով: Մուտքի լարումը DC24V, հզորությունը 18W, աշխատանքային պաշարը ոչ պակաս քան 50000 ժամ, երկարությունը՝	հատ	32	46500	1488000

	1000 մմ, լայնությունը 28 մմ, հաստությունը 30 մմ, կանգնակի բարձրությունը 82 մմ: Արտաքին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP66, լուսային ճառագայթի անկյունը 60՝, լուսային հոսքը 1170 lm,պաշտպանիչ շերտավարագույրով, լուսային ջերմաստիճանը 3000Կ:				
17	Լուսադիոդային ժապավեն ալյումինե պրոֆիլի մեջ, PVC լույսի ցրիչով: Մուտքի լարումը DC24V, հզորությունը 14.4W/1մ, աշխատանքային պաշարը ոչ պակաս քան 30000 ժամ: Արտաքին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP20, լուսային հոսքը 1200 lm/m, լուսային ջերմաստիճանը 3000Կ:	գմ	30	8000	240000
18	Արտաքին տեղադրման, 36 տեղանոց բաշխիչ վահան, չափսերը 430x435x155 մմ	հատ	1	26500	26500
19	Եռաֆազ ավտոմատ անջատիչ 32A նոմինալով 3M (C տիպ)	հատ	1	8650	8650
20	Միաֆազ ավտոմատ անջատիչ 25A նոմինալով 1M (C տիպ) 6kA	հատ	6	2400	14400
21	Միաֆազ ավտոմատ անջատիչ 10A նոմինալով 1M (C տիպ) 4.5kA	հատ	1	2400	2400
22	Ծրագրավորվող անալոգային ժամանակաչափ /ժամանակի ռելե/, 100 ժամ ընթացքի հիշողությամբ, 250V, 50/60 Hz, 16A	հատ	2	19000	38000
23	Երկմոդուլային եռաբեւեռ թողարկիչ, 25A, AC-1, 4HO, 230V AC/DC	հատ	2	22000	44000
24	Պզնձե, բազմաջիղ, 5 լարանի, կտրվածքները՝ 6մմ^2, պոլիվինիլ քլորիդ մեկուսացման շերտով մալուխ /ВВГнг 5x6մմ^2/	գմ	80	1950	156000
25	Պզնձե, բազմաջիղ, 3 լարանի, կտրվածքները՝ 2.5մմ^2, պոլիվինիլ քլորիդ մեկուսացման շերտով մալուխ /ВВГнг 3x2.5մմ^2/	գմ	1000	540	540000
26	Պզնձե, բազմաջիղ, 3 լարանի, կտրվածքները՝ 1.5մմ^2, պոլիվինիլ քլորիդ մեկուսացման շերտով մալուխ /ВВГнг 3x1.5մմ^2/	գմ	300	390	117000
27	Պզնձե, բազմաջիղ, 2 լարանի, կտրվածքները՝ 1.5մմ^2, պոլիվինիլ քլորիդ մեկուսացման շերտով մալուխ /ВВГнг 2x1.5մմ^2/	գմ	600	340	204000
28	Պզնձե, բազմաջիղ, 2 լարանի մալուխ վարդակներով, կտրվածքները՝ 1.5մմ^2, մեկուսացման շերտով, երկարությունը 1 մետր, ծայրերին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP65 վարդակներ:	հատ	64	2250	144000
29	Պզնձե, բազմաջիղ, 2 լարանի մալուխ վարդակներով, կտրվածքները՝ 1.5մմ^2, մեկուսացման շերտով, երկարությունը 5 մետր, ծայրերին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP65 վարդակներ:	հատ	8	11500	92000
30	Պզնձե, բազմաջիղ, 2 լարանի մալուխ վարդակներով, կտրվածքները՝ 1.5մմ^2, մեկուսացման շերտով, երկարությունը 10 մետր, ծայրերին միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP65 վարդակներ:	հատ	8	20000	160000
31	Բաշխիչ տուփ, 4 մուտքով, տրամագիծը 70 մմ, միացման դետալներով, պոլիվինիլ քլորիդից, միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP55.	հատ	125	970	121250
32	Բաշխիչ տուփ, 6 մուտքով, չափսերը 300x80x50 մմ, պոլիվինիլ քլորիդից, միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP55	հատ	36	3700	133200
33	Մեկուսիչ ճկախողովակ, տրամագիծը 20մմ	գմ	80	225	18000

34	Մեկուսիչ ՊՎՔ խողովակ, տրամագիծը 30մմ	գմ	30	350	10500
35	Հերմետիկ բաշխիչ տուփերի մեկուսացման համար	հատ	60	1450	87000
36	Ալյումինե ճկվող պրոֆիլ ԼԵԴ ժապավենը ամրացնելու համար:	գմ	30	6700	201000
37	Փոխակերպիչ 220V/24V, առավելագույնը 75W հզորության համար, չափսերը՝ 140x32x63մմ, աշխատանքային պաշարը ոչ պակաս քան 50000 ժամ, մետաղե կափարիչով, միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP67:	հատ	10	37600	376000
38	Փոխակերպիչ 220V/24V, առավելագույնը 250W հզորության համար, չափսերը՝ 265x40x68մմ, աշխատանքային պաշարը ոչ պակաս քան 50000 ժամ, մետաղե կափարիչով, միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP67:	հատ	28	63000	1764000
39	Հատակի մեջ ներկառուցվող լուսարձակների փոսերի ջրամեկուսացում եւ դրենաժ /10 լուսատուների փոսերի ջրամեկուսացում և ջրահեռացում/	հատ	10	9300	93000
40	Ակոսների փորում 10x20սմ եւ վերականգնում	գմ	40	4000	160000
41	Ավտոաշտարակ 22մ	օր	8	40000	320000
42	Ավտոաշտարակ 32մ	օր	3	70000	210000
43	Արդյունաբերական ալպինիստ (2 հոգի, 8 ժամ)	օր	4	48000	192000
Ընդամենը՝		100 %		34,800,000	

Ընդհանուր գնի մեջ ներառված են շահույթը և ԱԱՀ-ն:

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար–գլխավոր քարտուղար
Տ. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Բոֆֆո» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/2
ՀՎՀՀ: 00121699
Հ/Հ: 1570015445090100
Բանկ: Ամերիաբանկ
Հեռ.: +374 10523532
Տնօրեն Ա.Մանուկյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«29» հոկտեմբեր 2020թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՇԵՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքի անվանումը	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ Ազգային ժողովի շենքի արտաքին լուսավորության աշխատանքներ /4251/	Կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց տրամադրվելիք 45 օրացուցային օր հետո /բացառությամբ այն դեպքի, երբ Կապալառուն համաձայնում է աշխատանքները սկսել ավելի կարճ ժամկետում/	Առավելագույնը 45 աշխատանքային օր
ԸՆԴԱՄԵՆԸ		**45 աշխատանքային օր**	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար–գլխավոր քարտուղար
Տ. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Բոֆֆո» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/2
ՀՎՀՀ: 00121699
Հ/Հ: 1570015445090100
Բանկ: Ամերիաբանկ
Հեռ.: +374 10523532
Տնօրեն Ա.Մանուկյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«29» հոկտեմբեր 2020թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

«29» հոկտեմբեր

Հավելված 3.1
2020թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-20/9 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը

(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն